



## Հավասարակշռված եւ հեռանկարային սխեմաները կապահովեն կայուն տնտեսական աճ

Հունիսի 12-ին ՀՀ բնապահպանության նախարար Արծվիկ Մինասյանը հանդիպում է ունեցել Համաշխարհային բանկի ներկայացուցիչների՝ շրջակա միջավայրի տնտեսագետ Մայա Մուրիսիկի և հայաստանյան գրասենյակի ավագ տնտեսագետ Գոհար Գյուլումյանի հետ: Հանդիպմանը մասնակցել են նաև ՀՀ բնապահպանության նախարարի առաջին տեղակալ Էրիկ Գրիգորյանը, այլ պատասխանատու անձինք: Քննարկման առանցքում «Շրջակա միջավայրը՝ պարտքի դիմաց» ծրագրին վերաբերող հարցերն էին, մասնավորապես՝ փոխգործակցությունը ՀՀ-ի կողմից Հայաստանին տեխնիկական աջակցության ծրագրի մեկնարկը և այլն: ՀՀ Նախագահի հանձնարարականի կատարման շրջանակներում, ըստ որի՝ ակտիվացվելու են աշխատանքները բնություն-արտաքին պարտք մեխանիզմի գործադրման ուղղությամբ, ինչը հնարավորություն կտա Հայաստանի երկկողմ վարկային պարտավորություններից որոշակի միջոցներ ուղղել Հայաստանի բնապահպանական խնդիրների լուծմանը՝ նախարար Մինասյանը ողջունել է դրա իրականացմանը Համաշխարհային բանկի աջակցությունը, և նշել ճանապարհային քարտեզի ստեղծման անհրաժեշտությունը՝ ծրագրի իրականացման ընթացքն առավել արագ և նպատակային դարձնելու համար: «Մենք համոզված ենք, որ բարելավված շրջակա միջավայրը, որի մեջ մտնում են բնական ռեսուրսների բոլոր տեսակների

նկատմամբ պատասխանատու, հավասարակշռված և հեռանկարային օգտագործման սխեմաները, օգնելու է նաև մեզ երկարաժամկետ առունով ունենալու կայուն տնտեսական աճ: Մենք պատրաստ ենք ամբողջությամբ ներգրավվելու այս գործընթացի մեջ», -ասել է բնապահպանության նախարարը՝ նշելով, որ ծրագրի իրականացումը նպաստելու է ոչ միայն բնապահպանական ներդրումային ծրագրերի ներգրավմանը, այլև էականորեն նպաստելու է Հայաստանի՝ միջազգային հանձնառությունների արդյունավետ կատարմանը: Որպես առաջնահերթություն Արծվիկ Մինասյանը ներկայացրել է ծրագրային մի շարք առաջարկներ, որոնց շուրջ կարող են ծավալվել գործողություններ: Մասնավորապես, անդրադարձ է եղել ջրային համակարգին, անտառների և կանաչ տարածքների պահպանության և բարելավման հարցերին, հանքարդյունաբերության ոլորտի կարգավորմանը: ՀՀ ներկայացուցիչները պատասխանաբարություն են հայտնել հնարավորինս արագ փոխգործակցել ծրագրի իրականացման բոլոր կողմերի հետ, ինչի ապացույց է նախարարի հետ հանդիպումից հետո արդեն նախանշված աշխատանքային քննարկումը բնապահպանության նախարարի առաջին տեղակալ Էրիկ Գրիգորյանի հետ, ով նշել է, որ Հայաստանի հետ «Շրջակա միջավայրը՝ պարտքի դիմաց» ծրագրի բարեհաջող իրականացումը օրինակելի կարող է դառնալ այլ երկրների համար:

## «Հայաստանի բնությանը եւ կենսաբազմազանությանը եվրոպայի կենտրոնում մենք կարող ենք միայն նախանձել»:



Ստորագրվեց համագործակցության հուշագիր՝ Չեխիայի Հանրապետության բնության պահպանության գործակալության և Հայաստանի Հանրապետության բնապահպանության նախարարության աշխատակազմի կենսառեսուրսների կառավարման գործակալության միջև

Հունիսի 12-ին Պրահայում, Հայաստանի դեսպանությունում ստորագրվեց համագործակցության հուշագիր՝ Չեխիայի Հանրապետության բնության պահպանության գործակալության և Հայաստանի Հանրապետության բնապահպանության նախարարության աշխատակազմի կենսառեսուրսների կառավարման գործակալության միջև տեղեկատվության և փորձի փոխանակման վերաբերյալ: Հայկական կողմից հուշագիրը ստորագրեց բնապահպանության փոխնախարար Խաչիկ Հակոբյանը, իսկ չեխական կողմից՝ գործակալության տնօրեն Ֆրանտիշեկ Պելցը: Ստորագրման հանդիսավոր արարողությանը ներկա Չեխիայում Հայաստանի դեսպան Տիգրան Սեյրանյանը շնորհավորելով կողմերին, նշեց, որ հուշագիրը նոր հնարավորություններ է տալիս հայ եւ չեխ բնապահպաններին ավելի սերտ համագործակցության համար: Նրա ասելով՝ 2010 թվականից արդեն իսկ համագործակցում են չեխական Կրկոնոշի եւ Դիլիջանի Ազգային այգիները: Հայաստանի բնապահպանության փոխնախարար Խաչիկ Հակոբյանը ՕՐԵՐ-ի հետ զրույցում նշեց, որ հուշագրով մեծ տեղ է տրվում տեղեկատվության փոխանակմանը բնության և լանդշաֆտների պահպանության, հաղորդակցության, կրթության և հանրության իրազեկության վերաբերյալ տեղեկատվության կանոնավոր փոխանակման ոլորտում, ինչը ենթադրում է միասնական ձեռնարկով կենդանական աշխարհի, բնության եւ հատուկ տարածքների հավաքագրում, վերլուծում, փորձի փոխանակում, թե՛ կառավարման եւ թե՛ նեղ մասնագիտական առումով: Հուշագիրը ենթադրում է նաեւ էկոտուրիզմի խթանում, իսկ Եվրոպական Միության շրջանակներում Հայաստանը Չեխիայի հետ հանդես կգա համատեղ նախագծերով եւ կիրականացնեն միասնա-

կան ծրագրեր: Իր հերթին՝ Ֆրանտիշեկ Պելցը ՕՐԵՐ-ին հայտնեց, որ իրենք կարելու են ոչ միայն թղթի վրա ստորագրած հուշագրերը, այլև կարճաժամկետ կոնկրետ ծրագրերը, որոնք կիրականացվեն երկու տարվա ընթացքում: Նրա խոսքերով՝ Չեխիան ԵՄ օգնությամբ շատ մեծ փորձ է կուտակել հատկապես բնապահպանական տվյալների մոնիտորինգի համակարգ ստեղծելու եւ դրա վերլուծության բնագավառում, ինչը բավականին օգտակար կլինի նաեւ Հայաստանի համար: Մենք մոտ 20 միլիոնի հասնող շտեմարան ունենք, եւ շատ դյուրությամբ կարող ենք ասել, թե որտեղ կա բնապահպանական խնդիր, եւ որտեղ այն չկա: Նույնը կարելի է ստեղծել նաեւ Հայաստանում: Էկոտուրիզմը խթանելու նպատակով մեզնե մոնիտորինգներ կանցկացվեն նաեւ Հայաստանում, եւ արդյունքները կտրամադրվեն նաեւ զբոսաշրջիկներին, ովքեր ոչ միայն կծանոթանան Հայաստանի տեսարժան վայրերին, այլև դրանց պահպանման անհրաժեշտությանը եւ կարելուությանը: «Հայաստանը յուրահատուկ բնություն ունեցող երկիր է: Պետք է գտնել այն ոսկե միջինը, որը կօգնի, որպեսզի պահպանվի այդ հրաշք շրջակա միջավայրը եւ միաժամանակ, զարգացվի էկոտուրիզմը»- ասաց նա: Այս տարի արդեն իսկ նախատեսվում են փոխայցեր: Առաջիկա օրերին՝ հունիսի 13-14-ը նախատեսվում է նաեւ փոխնախարար Խաչիկ Հակոբյանի մասնակցությունը Օստրավայում կայանալիք Եվրամիության «Շրջակա միջավայրը եւ առողջապահությունը» նախարարական հանդիպմանը, որի ընթացքում կքննարկվեն բնապահպանական եւ առողջապահական գլոբալ խնդիրներ: Հիշեցնենք, որ Հայաստանի եւ Չեխիայի բնապահպանական նախարարությունների միջեւ առաջին համաձայնագիրը ստորագրվել է դեռեւս 2004 թվականին՝ նախարարներ Վարդան Այվազյանի եւ Լիբոր Ամբրոզեկի փոխայցերի արդյունքում: Այդ տարիներին Չեխիայի բնապահպանական ֆոնդը ֆինանսական աջակցություն է ցուցաբերել հայկական կողմին: Իսկ Չեխիայի բնապահպանության նախկին նախարար Լիբոր Ամբրոզեկը 2004 թ.-ին ՕՐԵՐ-ին տված հարցազրույցում ասել էր. «Հայաստանի մեծ հարստությունը նրա բնությունն ու կենսաբանական բազմազանությունն է, որոնց մենք այստեղ՝ Եվրոպայի կենտրոնում կարող ենք միայն ու միայն նախանձել: Հայաստանը ոչ միայն իր հազարամյա պատմությամբ եւ մշակույթով, այլև իր բնությամբ Եվրոպայի եւ ողջ աշխարհի հարուստ ժառանգությունն է: Ուստի Չեխիայի Հանրապետությունը նույնպես շահագրգռվածություն է ցուցաբերում շրջակա միջավայրի բնագավառում երկկողմանի համագործակցության հարցում, որպեսզի այդ հարստությունը միշտ պահպանվի ու բարգավաճի»:

## Գերմանական զարգացման բանկի /KfW/ առաքելության հետ

ՀՀ բնապահպանության նախարար Արծվիկ Մինասյանը հանդիպում է ունեցել Գերմանական զարգացման բանկի/ KfW/ «Կովկասում/Յայաստանում պահպանվող տարածքների աջակցություն» ծրագրի ղեկավար Անդրեաս Վեյցելի, KfW բանկի ներկայացուցիչ Թոմաս Այզենբախի և հայաստանյան ներկայացուցիչ Ջառա Չատինյանի հետ: Նախարար Արծվիկ Մինասյանը շնորհակալությունն է հայտնել Գերմանիայի Դաշնային Հանրապետության կառավարությանը՝ մեծածավալ աջակցության համար և նշել, որ համագործակցությունը նոր որակական մակարդակի բարձրացնելու անհրաժեշտություն կա: Հանդիպմանը քննարկվել են ծրագրային ընթացիկ հարցեր: Նախարար Մինասյանը ներկայացրել է շրջակա միջավայրի պահպանության ոլորտում նախատեսվող բարեփոխումները, անդրադարձել՝ անտառների և բնության հատուկ պահպանվող տարածքների կառավարման քաղաքականության միասնական համակարգի ձևավորման անհրաժեշտությանը: Անդրեաս Վեյցելը շնորհակալություն է հայտնել իրականացվող աշխատանքների մանրամասն ներկայացման համար՝ նշելով, որ Հայաստանի հետ համագործակցությունը միշտ կարև-



որել են և ներկայումս նախապատրաստում են երրորդ սերնդի ծրագիր՝ «Կենսաբազմազանության աջակցության ծրագիր Հայաստանում» աշխատանքային անվանումով, որը կընդլայնի համագործակցությունը ՀՀ բնապահպանության նախարարության հետ: Ծրագրի նպատակն է Հայաստանի Հանրապետության կենսաբազմազանության պահպանությունը, բնության հատուկ պահպանվող տարածքների և անտառների կայուն կառավարման համակարգերի հետագա բարելավումն ու զարգացումը: ՀՀ բնապահպանության նախարարը ողջունել է փոխգործակցության ընդլայնումը, նշել, որ գերատեսչությունն ամբողջությամբ պատրաստ է շարունակելու աշխատանքները և առաջիկայում արդեն համաձայնություն է ձեռք բերվել Հայաստանի հարավային տարածքներ, մասնավորապես, Ջանգեզուրի կենսոլորտային համալիրի համատեղ այցելելու ուղղությամբ, որ և տեղում կանդադառնան ծրագրի մանրամասներին:



## Առանց իրավական կարգավորման ծառերի էտի մեկնարկը թերի կլինի

Բնապահպանության գերատեսչությունում մեկնարկվել են ծառերի էտը նորմատիվ իրավական ակտերով կանոնակարգելու աշխատանքները: Նախատեսված միջոցառումների շրջանակում նախարարի տեղակալ Խաչիկ Հակոբյանի մոտ տեղի է ունեցել քննարկում՝ ՀՀ բնապահպանության նախարարության, ՀՀ գյուղատնտեսության նախարարության «Հայաստան» և «Անտառային պետական մոնիտորինգի կենտրոն» ՊՈԱԿ-ների համապատասխան ստորաբաժանումների ներկայացուցիչների, Երևանի քաղաքապետարանի պատասխանատուների մասնակցությամբ: Խաչիկ Հակոբյանը, շեշտելով հասարակության մեջ պարբերաբար քննարկումների առիթ տվող համայնքներում կատարվող ծառերի էտի խնդիրը, առաջարկել է վերանայել «Բնակավայրերի կանաչ գոտիների չափերին և կազմությանը ներկայացվող պահանջները սահմանելու մասին» ՀՀ կառավարության 2008 թ. թիվ 1318-Ն որոշումը և առանձին հավելվածով կանոնակարգել յուրաքանչյուր ծառի առանձնահատկություններից բխող էտի և խնամքի չափորոշիչները ու պահանջները: Մասնագիտական քննարկման ժամանակ առաջարկվել է

փաստաթուղթը մշակելիս հաշվի առնել նաև ծառերի տեղադիրքը, հանրապետության տարբեր համայնքներին բնորոշ կլիմայի առանձնահատկությունները: Նախարարի տեղակալ Խաչիկ Հակոբյանն առաջնային է համարել նաև մշակվող իրավական փաստաթղթով առանձին համայնքների բնակիչամայական առանձնահատկություններին հարմարվող ծառերի տեսակային կազմի կանոնակարգումը, որը որպես ուղենիշ պետք է հաշվի կառնի պարբերաբար իրականացվող ծառատունկերի ժամանակ, քանի որ լինում են դեպքեր, երբ մի համայնքում տնկվում են այնպիսի ծառատեսակներ, որոնք չեն հարմարվում տեղի պայմաններին և նվազում է իրականացված աշխատանքների արդյունավետությունը: Ծավալված շահագրգիռ քննարկման արդյունքում՝ հնչել են բազմաթիվ մասնագիտական հիմնավորումներ, որոշվել է ներկայացնել գրավոր առաջարկներ՝ նորմատիվ իրավական ակտի հիմնադրույթների ձևավորման նպատակով: Նախարարի տեղակալը հանձնարարել է փաստաթուղթը մշակել սեղմ ժամկետներում՝ մինչև 2017թ. աշնանային էտի մեկնարկը:

# Տեղեկացնում է նախարարության պետական տեսչությունը



Բնապահպանական պետական տեսչության կողմից 12.06.-16.06.2017 թթ ժամանակահատվածում իրականացված շրջայցերի, ԲՊՏ վարույթին հանձնված գործերի քննության և հաշվետվությունների ընդունման գործընթացում հայտնաբերված խախտումների արդյունքում կայացվել է 810,0 հազ. դրամ ընդհանուր գումարի վարչական տուգանքի 15 որոշում և հաշվարկվել 302.0 հազ.դրամ ընդհանուր գումարի շրջակա միջավայրին հասցված վնաս: Մասնավորապես՝

Բուսական աշխարհի պահպանության ոլորտ՝  
Կազմվել է վարչական տուգանքի 6 որոշում 300 հազ. դր. գումարի և հաշվարկվել է 228,0 հազ. դրամ գումարի շրջակա միջավայրին պատճառված վնաս, որից՝  
Լոռու տարածքային բաժնի աշխատակիցների շրջայցերի արդյունքում հայտնաբերված ապօրինի հատված երեք ծառի (բոխի) համար կայացվել է 100,0 հազ. դրամ ընդհանուր գումարի 2 վարչական տուգանքի որոշում և հաշվարկվել է 63,0 հազ. դրամ ընդհանուր գումարի շրջակա միջավայրին հասցված վնաս: ՀՀ ոստիկանության ԼՍԿ Գուգարքի բաժնի կողմից կազմված անտառ-խախտման արձանագրության հիման վրա (ապօրինի հատված 2 ծառ) Լոռու տարածքային բաժինը կազմել է 50,0 հազ. դրամ գումարի վարչական տուգանքի 1 որոշում և հաշվարկել 102,0 հազ. դրամ գումարի շրջակա միջավայրին հասցված վնաս: Տավուշի տարածքային բաժինը «Սևարի» անտառտնտեսությունից ստացված արձանագրությունների հիման վրա (4 ծառի ապօրինի հատում) 3 դեպքով կայացրել է 150,0 հազ. դրամ ընդհանուր գումարի 3 վարչական տուգանքի որոշում, ինչպես նաև հաշվարկել 63,0 հազ. դրամ ընդհանուր գումարի շրջակա միջավայրին հասցված վնաս:

Ապօրինի որսի իրականացման համար՝  
Կազմվել է վարչական տուգանքի 3 որոշում 150,0 հազ. դր. գումարով և հաշվարկվել է 2,0 հազ. դր. գումարի շրջակա միջավայրին հասցված վնաս, առգրավվել է 166 հատ (44,0 կգ) «սիգ» տեսակի ձուկ, 105 հատ խեցգետին, 8 հատ խեցգետնաորսիչ, որից՝ Գեղարքունիքի տարածքային բաժինը «Սևան ԱՊ» ՊՈԱԿ-ի հետ հայտնաբերել է (տիրագուրկ) 8 հատ խեցգետնաորսիչ, 105 հատ խեցգետին. 166 հատ (44,0 կգ) «սիգ» տեսակի ձուկ, ինչն օրենքով սահմանված կարգով հանձնվել է Սևանի թիվ 3 Սարտունու թիվ 4 մանկապարտեզներին և «Սևանի հոգեբուժական հիվանդանոց» ՓԲԸ-ին, խեցգետինը կենդանի վիճակում բաց է թողնվել Սևանա լիճ, իսկ խեցգետնաորսիչները ի պահ են հանձնվել «Սևան ԱՊ» ՊՈԱԿ-ի պահեստ: Գեղարքունիքի տարածքային բաժնի և «Սևան ԱՊ» ՊՈԱԿ-ի համատեղ ստուգայցերի արդյունքում

հայտնաբերված խախտումների (ապօրինի խեցգետնաորսի 2 դեպք) հիմքով կազմվել է 100,0 հազ. դրամ ընդհանուր գումարի վարչական տուգանքի 2 որոշում: Գեղարքունիքի տարածքային բաժինը «Սևան ԱՊ» ՊՈԱԿ-ից ստացված 10 գույլս խոշոր եղջերավոր անասունների ապօրինի արածեցման փաստի հիմքով կազմել է 50.0հազ.դրամ գումարի վարչական տուգանքի 1 որոշում և հաշվարկել է 2,0 հազ. դրամ գումարի շրջակա միջավայրին հասցված վնաս: Կոտայքի տարածքային բաժնի աշխատակիցների ստուգայցերի արդյունքում հայտնաբերվել է առգրավվել է 21 հատ (14,5 կգ) «սիգ» տեսակի ձուկ: Չուկը հանձնվել է Արմավյան քաղաքի «Նարեկ» ծերանոցին:



Փայտանյութի ապօրինի տեղափոխում՝  
Կազմվել է վարչական տուգանքի 2 որոշում՝ 200,0 հազ. դրամ գումարով և հաշվարկվել է 72,0 հազ. դրամ գումարի շրջակա միջավայրին հասցված վնաս, որից՝  
Արարատի տարածքային բաժնի աշխատակիցների շրջայցերի արդյունքում հայտնաբերված վառելափայտի ապօրինի տեղափոխման 2 դեպքի համար կազմվել է 200,0 հազ. դրամ ընդհանուր գումարի 2 վարչական տուգանքի որոշում և հաշվարկվել 72,0 հազ. դրամ ընդհանուր գումարի շրջակա միջավայրին հասցված վնաս:

Մթնոլորտի պահպանության ոլորտ  
Կազմվել է վարչական տուգանքի 2 որոշում՝ 100,0 հազ. դրամ գումարով, որն է՝  
Շիրակի տարածքային բաժնի աշխատակիցների շրջայցերի արդյունքում հայտնաբերված՝ առանց անթափանց ծածկի խճի տեղափոխման 1 դեպքի համար մեկ ֆիզիկական անձի նկատմամբ կայացվել է 50,0 հազ. դրամ գումարի վարչական տուգանքի որոշում: Երևանի տարածքային բաժնի աշխատակիցների շրջայցերի արդյունքում հայտնաբերված՝ առանց անթափանց ծածկի շինարարական աղբի տեղափոխման 1 դեպքի համար մեկ ֆիզիկական անձի նկատմամբ կայացվել է 50,0 հազ. դրամ գումարի վարչական տուգանքի որոշում:

Հողերի պահպանության ոլորտ  
Կազմվել է վարչական տուգանքի 2 որոշում՝ 60,0 հազ. դրամ գումարով, որից՝  
Արագածոտնի տարածքային բաժնի աշխատակիցների ստուգայցերի արդյունքում հողի բերրի շերտի տեղափոխման համար ֆիզիկական անձի նկատմամբ կայացվել է 30,0 հազ. դրամ գումարի վարչական տուգանքի 1 որոշում: Տավուշի տարածքային բաժնի աշխատակիցների ստուգայցերի արդյունքում հողի բերրի շերտի տեղափոխման համար ֆիզիկական անձի նկատմամբ կայացվել է 30,0 հազ. դրամ գումարի վարչական տուգանքի 1 որոշում:

Վարչարարության և փորձաքննության բաժինը հաշվետու ժամանակաշրջանում ՀՀ վարչական դատարան է ներկայացրել 1 հայցադիմում՝ 316,5 հազ. դրամ պատճառված վնասի գումարը հարկադիր կարգով գանձելու համար: Ընդհանուր առմամբ ԲՊՏ կիրառված պատժամիջոցներից նշված ժամանակահատվածում ՀՀ պետական բյուջե է մուտքագրվել 1,0 մլն. դրամ գումար:

## Հունիսի 17-ը անապատացման դեմ պայքարի միջազգային օրն էր

Հունիսի 17-ը Միավորված Ազգերի կազմակերպությունը հռչակել է որպես անապատացման և երաշտի դեմ պայքարի միջազգային օր: Այն նպատակ է հետապնդում բարձրացնելու իրազեկությունը անապատացման և երաշտի սպառնալիքների նկատմամբ: Սա հնարավորություն է հիշեցնելու բոլորին, որ հնարավոր է արդյունավետ պայքարել անապատացման դեմ, որի հիմնական գործիքն է հասարակության ակտիվ մասնակցությունը և համագործակցությունը բոլոր մակարդակներում: 2017 թվականի Անապատացման դեմ պայքարի համաշխարհային օրվա տոնակատարությունը նշանավորվում է այն ներուժով, որն ունի հողը՝ տալով մարդկանց հնարավորություն և ապագա շարունակելու ապրել իրենց հայրենի հողի վրա: Այս տարի հունիսի 17-ի կապակցությամբ ՄԱԿ-ի «Անապատացման դեմ պայքարի» Կոնվենցիան համախմբման կոչ է անում՝

### Մեր հողը: Մեր տունը: Մեր ապագան:

Կարգախոսը նպատակ ունի աջակցելու դեգրադացված հողերի վերականգնման և բերրիության բարձրացմանը: Կայուն ապագա ունենալու գործում այդ աջակցությունը կարևոր դեր ունի դիմակայելու անապատացման երևույթներին: Կարգախոսը մարդկանց ուշադրությունը սևեռում է հողերի բերրիությանը, որը կարևորագույն գործոն է նվազեցնելու միգրացիան: Ամբողջ աշխարհում վերջին տարիների ընթացքում միջազգային միգրանտների թիվը արագ տեմպերով շարունակվում է աճել՝

2000 թ. – 173 միլիոն,

2010 թ. – 222 միլիոն,

2015 թ. – 244 միլիոն մարդ (Միջազգային միգրացիայի մասին զեկույց - 2015 թ.):

Հողի բերրիության անկումը ստիպում է մարդկանց ընտրել կյանքի ռիսկային ուղի: Գյուղական վայրերում, որտեղ մարդիկ կախված են սուղ հողային ռեսուրսներից՝ հողերի դեգրադացիան դառնում է հարկադիր գաղթի գործոն: Ըստ ՄԱԿ-ի «Անապատացման դեմ պայքարի» Կոնվենցիայի քարտուղարության՝ միգրացիայի և զարգացման խնդիրների (շրջակա միջավայրի վիճակի վատթարացում, քաղաքական իրավիճակի անկայունություն, սննդի անվտանգության բացակայություն և չքավորություն) միջև նկատվում է ուղղակի կապ: Քանի դեռ մենք չենք փոխել մեր մոտեցումը հողերի կառավարման նկատմամբ, հաջորդ տասնամյակների ընթացքում կարտագաղթվեն միլիարդավոր մարդիկ՝ չունենալով այլընտրանք: Հողերի բերրիության աճը կմեծացնի հողօգտագործողների եկամուտը, ինչն էլ իր հերթին կկանխի մարդկանց միգրացիան և կնվազեցնի կոնֆլիկտների ռիսկերը: Կայուն հողօգտագործումը ստեղծում է նոր աշխատատեղեր գյուղատնտեսության, վերամշակող արդյունաբերության և տուրիզմի ոլորտներում: ՄԱԿ-ի «Անապատացման դեմ պայքարի» Կոնվենցիայի գործադիր քարտուղար Մոնիկ Բարբյուն անդրադառնալով ներկա իրավիճակին նշել է, որ ամբողջ աշխարհի քաղաքա-



կան օրակարգում միգրացիայի հետ կապված հարցը զբաղեցնում է առաջնային տեղ, քանի որ կան գյուղական համայնքներ, որոնք գտնվում են ծանր վիճակում, իսկ որոշները լքում են իրենց հողերը: Խնդիրը նրանում է, որ ապրուստի միջոցների կորուստը հողերի դեգրադացիայի պատճառով, բերում է մարդկանց անելանելի վիճակի: Նրա կարծիքով, հաջողության հասնելու հնարավորությունը այսօր ավելի մեծ է, քան երբևէ մասկիցում: Հողերի կայուն կառավարման միջոցով և հողերի չեզոք դեգրադացիային հասնելու ջանքերի ներդրումով, այսօր և ապագայում, մենք կարող ենք նվազեցնել կլիմայի փոփոխության ազդեցությունը, կանխել բնական պաշարների օգտագործման հետ կապված հակամարտությունները և նպաստել համայնքների զարգացմանը: Ավելի քան 100 երկիր, որոնք ենթարկվում են անապատացման կամ երաշտի, ներգրավված են ազգային թիրախների որոշման գործընթացում՝ մինչև 2030 թվականը հողերի դեգրադացիան իսպառ վերացնելու համար: Ներդրումներ կատարելով հողերի բարելավման և վերականգնման համար, երկրում կստեղծվեն տնային տնտեսություններին և համայնքներին ապրելու հնարավորություն, լրացուցիչ աշխատատեղեր, որոնք էլ իրենց հերթին կամրապնդեն ազգային անվտանգությունն ու կայուն զարգացման հեռանկարները: Այստեղ պետք է նշել, որ 2015 թ. ՀՀ բնապահպանության նախարարության կողմից իրականացվել է «Դեպի հողերի չեզոք դեգրադացիայի հասնելը. գաղափարը Հայաստանում գործնականում կիրառելի դարձնելու մասին» պիլոտային ծրագիրը: Արդյունքում հնարավոր եղավ գնահատել հողերի չեզոք դեգրադացիայի հասնելու հնարավորությունը Հայաստանում, մասնավորապես ազգային կամավոր թիրախների որոշման համար՝ արդյունքները զեկուցվեցին ՄԱԿ-ի «Անապատացման դեմ պայքարի» Կոնվենցիայի կողմերի 12-րդ նստաշրջանին և որոշվեց ընդլայնել պիլոտային ծրագրի իրականացումն այլ երկրներում, ինչը ներկայումս իրականացվում է: Միավորված Ազգերի կազմակերպության «Անապատացման դեմ պայքարի» կոնվենցիան ընդունվել է 1994 թվականին Փարիզում՝ այն միակ իրավաբանորեն պարտավորեցնող միջազգային պայմանագիրն է, որը կապված է հողային հարցերի հետ: Կոնվենցիան աջակցում և նպաստում է հողերի արդյունավետ կառավարմանը: Կոնվենցիայի 195 Կողմ երկրների նպատակն է գործընկերության միջոցով հասնել Կոնվենցիայի դրույթների և կայուն զարգացման նպատակների իրականացմանը:

# «Քարահունջ» պատմամշակութային համալիրում ստորագրվեց անչափ կարեւոր մի հուշագիր



Սյունիքի մարզի «Քարահունջ» պատմամշակութային համալիրում կնքվել է փոխհամագործակցության հուշագիր ՀՀ բնապահպանության նախարարության և «Հայ Լեռնագնացների Ընկերություն-Հայաստան» հասարակական կազմակերպության միջև: Հուշագիրը ստորագրել են ՀՀ բնապահպանության նախարարի տեղակալ Խաչիկ Հակոբյանը և «Հայ Լեռնագնացների Ընկերություն-Հայաստան» հասարակական կազմակերպության նախագահ Գևորգ Գասպարյանը: Հուշագրի նպատակն է Հայաստանում զբոսաշրջության զարգացման վերջինիս առնչվող բնապահպանական խնդիրների կարգավորման, զբոսաշրջային ենթակառուցվածքների նորոգման և պահպանման համապատասխանեցումը միջազգային չափանիշներին, ինչպես նաև տեղեկատվական վահանակների տեղադրում իրենց կողմից:

Հուշագրի շրջանակներում կողմերը պայմանավորվել են շարունակական համագործակցություն իրականացնել է էկոտուրիստական, հեծանվային արահետների նորոգման աշխատանքներում (զբոսաշրջային երթուղիների գծանշում միջազգային չափանիշներին համապատասխան), հատուկ պահպանվող տարածքներում գծանշված երթուղիների մասին տեղեկատվության տեղադրման, երթուղիների և դրանց առնչվող ճշգրիտ ինֆորմացիան զբոսաշրջային ընկերությունների շրջանում տարածման և մի շարք այլ հարցերի վերաբերյալ:

# «Զիկատար» բնապահպանական կենտրոնի նոր ու ինքնատիպ նախաձեռնությունը



Նոյեմբերի 15-17-ը նախարարարության «Զիկատար» բնապահպանական կենտրոնում կ ՄԱԶԾ-ԳԷՀ (UNDP-GEF) «Հողերի և անտառների կայուն կառավարման ներդրումը հյուսիս-արևելյան Հայաստանի լեռնային լանդշաֆտներում» ծրագրի շրջանակներում կազմակերպվել էր աշխատաժողով, որին մասնակցել են պետական գերատեսչությունների, միջազգային և հասարակական կազմակերպությունների ներկայացուցիչներ, շահառու համայնքների ղեկավարներ, ոլորտը լուսաբանող լրագրողներ: Ծրագրի անտառների կառավարման պլանի վերանայման ղեկավար Անդրանիկ Ղուլիջանյանը ներկայացրել է ՀՀ Տավուշի մարզի Կողբ համայնքին հարակից «Մշկավանք» դպրոցական անտառպետության

հիմնմանը և մշակվող կառավարման պլաններում դրա ու պահպանվող այլ տարածքների ինտեգրմանը վերաբերող միջոցառումները: Առաջին անգամ Հայաստանում ստեղծվող դպրոցական անտառպետության կառավարումն հանձնվելու է հարակից համայնքի դպրոցների աշակերտներին, ովքեր, ոչ միայն կզբաղվեն անտառի կառավարմամբ և պահպանմամբ, որն էկոկրթական բաղադրիչ է իր մեջ ներառում, այլև անտառի պտուղների և մրգերի վաճառքով, ինչից առաջացած հասույթով կլուծեն դպրոցների և սոցիալապես անապահով աշակերտների խնդիրները: «Անտառների և բնության հատուկ պահպանվող տարածքների կառավարման խնդիրները» խորագրով կլոր սեղանին մասնակցել է նաև նախարար Արծվիկ Մինասյանը: Նա շրջել է «Զիկատար» բնապահպանական կենտրոնի տարածքում, ծանոթացել անտառի պահպանման միջոցառումներին, ինչպես նաև էկոտուրիստական ենթակառուցվածքների զարգացման ուղղությամբ կատարվող աշխատանքներին, այցելել Կողբի արվեստի դպրոց, ծանոթացել դպրոցի սաների ստեղծագործություններին, որոնց մեծ մասը նվիրված էր հայրենի բնաշխարհին:

## Ի՞նչ նորություններով է մեզ ուրախացնում Բնության պետական թանգարանը

Բնության պետական թանգարանի ֆոնդերում առկա են ավելի քան 6 հազար ցուցանմուշներ, որոնց թիվը տարեց տարի ավելանում է և որոնց մեկ երրորդը (շուրջ 2000-ը) ներկայացվում է այցելուների մշտական և ժամանակավոր ցուցադրությանը: Թանգարանի չորս սրահներում ցուցադրվում են ֆլորայի և ֆաունայի հազվագյուտ տեսակներ, որոնք արտացոլում են մեր երկրի բնության յուրահատկություններն ու ընդերքի հարստությունը: Ներկայացված են կաթնասունների, թռչունների, սողունների, երկկենցաղների, ձկների, միջատների, սարդակերպերի խրտվիլակներ, կմախքներ, մաշկեր, փափկամարմինների խեցիներ, ծառերի կտրվածքներ, հերբարիումի, բրածո բույսերի ու կենդանիների, օգտակար հանածոների նմուշներ, յուղաներկ կտավներ, գծանկարներ և այլն:

Այս տարվա տարեսկզբից մինչև այժմ թանգարան այցելողների թիվը կազմել է ավելի քան 3000 հոգի: Թանգարան այցելողները ներկայացնում են հասարակության տարբեր շերտեր՝ դպրոցականներ, ուսանողներ, մեծահասակներ, առանձին ընտանիքներ:

Սա վկայում է այն մասին, որ մեծացել է հետաքրքրու-



թյունն էկոլոգիական կրթության, դաստիարակության և էկոմշակույթի ձևավորման նկատմամբ:

Վերջին ամիսների ընթացքում հիմնական ֆոնդը համարվել է «Սև կեռնեխ» (*Turdus merula*) ցուցանմուշով, որը պատկանում է Ճնճղուկազգիներին և աչքի է ընկնում իր արու տեսակի՝ սրինգի ձայնը հիշեցնող երգեցողությանը և նույնպես Ճնճղուկազգիներին պատկանող «դաշտային ճնճղուկ» տեսակներով: Դրանք տարածված են ինչպես Հայաստանում, այնպես էլ Եվրոպայում, Աֆրիկայում, Փոքր Ասիայում և Հինաստանում:

Թանգարանի առօրյան հետաքրքիր են դարձնում նաև ՀՀ տոներին նվիրված միջոցառումները:



Դիլիջան ազգային պարկում շարունակվում են շուրջօրյա ստուգայցերը ապօրինի ծառահատումների և որսագողության դեպքերը կանխարգելելու և բացահայտելու նպատակով: Աշխատակիցների կողմից շուրջօրյա շրջայցերի ընթացքում հայտնաբերվել է 4 անտառխախտման դեպք (ապօրինի 11 ծառահատում), կազմվել են արձանագրություններ և ուղարկվել ՀՀ բնապահպանության նախարարության աշխատակազմի բնապահպանական պետական տեսչության Տավուշի տարածքային բաժին: Բնակչությանը տրամադրվել է քա-

## «Դիլիջան» ազգային պարկի ամառային առօրյան

մատապալ, հողմատապալ փայտանյութից առաջացած 6 խ.մ. վառելափայտ: Գիտության բաժնի աշխատակիցների կողմից կատարվել է արծաթափայլ եղևնու սերմերի ցանքս: Էկոթրոլիների ընթացիկ վիճակին ծանոթանալու նպատակով իրականացվել է շրջայց Պարզ լիճ-Գոշավանք երթուղու սկզբնամասում գտնվող խաչքարերի տարածքում: Ռեկրեացիոն և էկոտուրիզմի աշխատակիցների կողմից էկոտուրիզմի գովազդման նպատակով այցելություններ են իրականացվել Դիլիջան քաղաքում գործող հյուրատներ և բացատրել, որ էկոտուրիզմի սիրահարները կարող են այցելել Դիլիջան ազգային պարկ և օգտվել պարկի կողմից մատուցվող ծառայություններից: Ազգային պարկը ունի 19 երթուղի և մեկ հեծանվային երթուղի, որոնց մեջ ներառվում են պատմամշակութային համալիրներ, բնության հուշարձաններ: Այցելուները հնարավորություն ունեն նաև տեղադրել վրաններ, ինչպես նաև՝ դիտակետերից հետևել կենդանական աշխարհի շարժին:

# Իջևանի Դենդրոպարկը իբրև գիտական լուրջ կենտրոն եւ հիանալի հանգստի վայր



Իջևանի այցետունը՝ Դենդրոպարկը, հիմնադրվել է 1962 թ.-ին: Դենդրոպարկի հիմնադիրն է «Հայգիտանտառ» փորձկայանի տնօրեն, կենսաբանական գիտությունների թեկնածու Հայկ Մուշեղի Հախինյանը և ավագ գիտական աշխատող, անտառային տնտեսության ինժեներ Գրիգոր Իվանի Աղամյանը, որոնց հետ միասին աշխատում էր նաև Լյուդվիգ Սայադյանը: Լյուդվիգ Սայադյանը համարվում է այդ շնորհալի գործի պահպանողը և շարունակողը: Հինգ տասնամյակի ընթացքում Իջևանի անտառաճման համար բարենպաստ հողակլիմայական պայմաններում փորձարկվել է 1000 տեսակ և ավել ծառեր և թփեր: Դենդրոպարկում փորձարկված ծառերից ու թփերից 640 տեսակը իրենց հիանալի են դրսևորել Իջևանի հողակլիմայական պայմաններում: Դրանք հոլարկտիկայի բուսական թագավորության 6 բուսաբանական մարզերի ներկայացուցիչներ են, կան նաև հիբրիդ բույսեր: Փորձարկված տեսակներից շատերն այստեղ գտել են իրենց երկրորդ հայրենիքը՝ այսօր գերազանց կերպով աճում, ծաղկում և պտղաբերում են, իսկ միշարք տեսակներ էլ տալիս են ինքնացանք: Իջևանի «Դենդրոպարկը» ներկայումս աշխարհի այլ աշխարհագրական շրջաններ-

րից ներմուծված ծառերի և թփերի տեսակային կազմով հանրապետությունում ամենա հարուստներից է և հետաքրքիրը: Եվ պատահական չի, որ հենց այստեղ են հաճախակի հրավիրվել գիտաժողովներ՝ ԽՍՀՄ-ի և Կովկասի մասշտաբով: Դենդրոպարկը համարվում է բազմաթիվ բարձր գեղազարդ ծառերի և թփերի, սերմերի ու կտրոնների ստացման աղբյուր (գենոֆոնդ), գիտաճանաչողական և էկոճանաչողական էքսկուրսիաների անցկացման տեղ և իհարկե՝ իբրև հանգստիվայր ու մասնագետների ուսուցման բազա: Դենդրոպարկի հիմքի վրա հիմնադրվել են տնկարաններ, որոնք բաց են թողնում տնկանյութ՝ անտառային տնտեսություններին, կանաչապատող կազմակերպություններին՝ անտառատնկման և կանաչապատման նպատակով: Պատահական չէ, որ Իջևան քաղաքի և հարակից բնակավայրերի բոլոր հիմնարկ-ձեռնարկությունները, դպրոցները, նախադպրոցական հիմնարկները կանաչապատված են լավագույն ձևով: Այստեղ կիրառվել են ծառայգուն աճեցվող շուրջ 60 տեսակ բարձր գեղազարդ հատկանիշներ ունեցող ծառեր ու թփեր: Դենդրոպարկի բոլոր ծառերը և թփերը պիտակավորված են, որոնց վրա նշված են նրանց լատիներեն, ռուսերեն և հայերեն անունները ու հայրենիքը: Դենդրոպարկը հանդիսանում է հանրապետությունում տարին բոլոր ծաղկող միակ բուսաբանական օբյեկտը, քանի որ նույնիսկ հունվար և փետրվար ամիսներին այստեղ կարելի է տեսնել ծաղկած ծառաթփատեսակ (Ձմեռածաղիկ վաղ. Հոնի սովորական, ցախակեռաս Ստենդիշ): Իջևանի Դենդրոպարկը, ինչպես նաև՝ ՀՀ-ում գործող մյուս երեք դենդրոպարկերը 2002-2003 թթ. ընդգրկվեցին «Արգելոցապարկային համալիր» հիմնարկի միացյալ կազմի մեջ, որն էլ 2006 թ. վերակազմավորվեց և դարձավ՝ «Արգելոցապարկային համալիր» ՊՈԱԿ: Իջևանի դենդրոպարկի գենոֆոնդի պահպանման զարգացման, խնամքի գեղազարդ ծառաթփատեսակների բազմացման գործի հիմադիր Լ. Սայադյանի որդին՝ Սեխակ Սայադյանը, շարունակում է տեր կանգնել հոր թողած շքեղ ժառանգությունը: Նա շուրջ 30 տարի է արժանապատվորեն և մեծ հմտությամբ ղեկավարում է դենդրոպարկը:

Նյութը կազմեցին  
**Մ. Սայադյանը, Հ. Փարսադանյանը**

Նախագիծը՝ Արծուն Պեղանյանի  
Խմբագիր՝ Սանվել Սկրչյան  
Ձևավորումը՝ Նարինե Բաղդասարյանի  
Նյութերը՝ ՀՀ ԲՆ Տեղեկատվության և հասարակության հետ կապերի վարչության

Հեռախոս՝  
**011 818 517**